

աղգը, որ իր բնական ընդարձակ ընդունակութիւններ չնորհով պէտք է մեծ ազդեցութիւն ունենար շրջապատող ազգերի զարգացման վրայ, գրեթէ ոչինչ ազդեցութիւն չունի:

Մենք այն ազգասէր անձերի թւին չենք պատկանում, որք ուրախանում են երբ տեսնում են թէ հայը հարստանում է... իսկ ինչպէս է հարստանում, այդ տեսակներին մի և նոյն է, միայն որ հայը հարստանար, որ դրամագլուխը հայի ձեռքում լինէր...

Մենք այդ ազգասէր անձերի թւին չենք պատկանում՝ հարստահարողը մեզ ամեն տեղ ատելի է, որ ազգութեան և պատկանէր. նա մեզ ատելի է երբ մի մարդ հարստանում է ամեն տեսակ աններելի միջոցներով, թէև նա հայ լինէր, մեղ նոյնքան ատելի է որ հայը հարստահարում է, կողպատում է լեզգիներին, որքան ատելի է որ նոյն հայը հարստահարէր և իր հայրենակիցներին:

Մենք գիտենք, որ այն հայը որ հարստահարում է վրացուն և լեզգուն, նա պատահած դէպքում նոյնպէս և նոյնքան սաստիկութեամբ կը հարստահարէ և իր հայրենակիցին, հային...

Չանաղանութիւնը մեր և հին ու նոր սերունդի ազգասէր հարստահարողների մէջ չի, որ նրանք ուրախանում են հայի ճարպիկութեան վրայ, ինչ միջոցներ և դիմէր նա հարստանալու. բարձրանալու համար, այն պատճառով միայն որ նա հայ է, իսկ մենք կարծում ենք որ մեր զգացմունքը աւելի ազգասիրական է, որովհետեւ անխնայ յարձակվելով հայ հարստահարողի վրայ, մենք սորանով պաշտպանում ենք հայ աղքատ և աշխատասէր ժողովուրդը:

Ինչ օգուտ հայ աղքատ, մշակ, աշխատասէր թէ գիւղական թէ քաղաքին ժողովուրդին, որ նրա հայրենակից քանի մի անհասներ այս կամ այն զգվելի միջոցով հարստանում են...

Իսկ ընդհանրապէս եթէ նոյն հայ աղքատ ժողովուրդը փոքր ինչ աւելի զարգացած և հեռաւոր լինէր, նա ինքն կը համակերէր մեզ մեր յայտնած մտքերի պատճառով, սրովհետեւ կը հասկնար որ այն հայը որ հարստահարում է օտարազգիներին՝ Չաքալաւում, Թէյաւում կամ Թիֆլիսում, նա այնքան զուրկ է խճմանքից որ այսօր կամ վաղը երևան տեղափոխուելով, նա կը հարստահարի և իր հայրենակիցին, հային...

Եթէ հայ ստորին, քաղաքի և գիւղի ազգաբնակչութիւնը աւելի զարգացած լինէր, նա կը հասկնար որ նրա հայրենակից հարստահարողները, որտեղ և լինէին նրանք, մի սպառնալի հասարակական երևոյթ են հայ աշխատասէր ամբոխի թէ կանոնադր անտեսական և մտաւոր զարգացման, և թէ հասարակական առաջադիմութեան համար:

(Մշ.)

ՄԱՐԴԱՅԻՆ ՍԵՌԻՆ ԿՐՕՆԻՆ ՎՐԱՅ
(Տիւնի նիւթի միջոցն պաղքէտ)

Ըստ ի միտ առնելու համար տիեզերական վերածնութեան գործը, պէտք է լինէր կերպիւ խիւր իրարու դիմաց բերել իրարու պատմական ժամանակներն, նկարել թողութիւն-ժողովուրդը իր փառայի և իր ազատութեան մէջ, Աւետարանի ժողովուրդին իրենց քաղաքակրթութեան և իր և նոյն յառաջգիւղական մէջ, բայց այս նկարը աշխարհ անդամ գծուած

են որ ամեն նոր կրկնութիւն տաղա-կալի կը լինէր: Հարկ չհամարելով ուրեմն բացատրել ծանօթ իրողութիւնքն, հին և արդի ժամանակայ պատմութիւնը կը համառօտեմ իրենց յատկանիշը եղող բարոյական գաղափարին մէջ:

Հին ժամանակի բարոյական գաղափարը, հայրենեաց սէրն է: Հին հասարակապետութեանց բոլոր սքանչելիքներն այս հզօր՝ այլ անձուկ խաբիսին վրայ կը հիմնուին:

Արդի ժամանակայ բարոյական գաղափարը՝ մարդկային սեռին սէրն է: Տիեզերական մարդասիրութիւնը, որ Աւետարանի ոգին է, կը գրիչ բովանդակ մարդկութիւնն:

Յաւալի է դիտել, բայց բովանդակ հնութեան մէջ կարելի չէ գտնել միակ իմաստուն մը, միակ օրէնսդիր մը որ, իւր երկրին օրէնքներն հիմնելու առեւ, ինկատի ունենայ ուրիշ ժողովուրդից երջանկութիւնն ալ:

Այս նոր առաքելութիւնը, Յիսուս Քրիստոս զայն ազգաց կուտայ, և բովանդակ աշխարհի անծանօթ զգացումէ մը դուրս կը հանէ աշխարհի փրկութիւնը: Ատելութեան և մոլեռանդութեան վարդապետութեանց, առանձնանորհեալ ցեղի, ընտրեալ ժողովուրդեան, Աստուծոյ ժողովուրդեան անձուկ գաղափարաց մէջ սնած ու կրթուած աղայ մի յանկարծ կուգայ մարդկային ազգին սէրը ուսուցանել: Աստուծաշնչի բարկութեան աստուծոյն, Արարչամու կողմնակալ Աստուծոյն տեղը կը դնէ Արարիչը, բոլոր մարդկան հայրը: Մովսէս մէկ ժողովուրդեան մը ազատարարն էր միայն, Յիսուս պիտի լինի փրկիչ տիեզերաց: Ինչ մարդասիրութիւն, ինչ գիւղական, ինչ քաղաքացի մերկանայ իւր ցեղին հաղուստն: Ինչպէս կը թօթափէ ազգային հզօրութիւնը: Ինչպէս կը խորտակէ աւելորդապաշտութեան և բռնապետութեան շղթաներ, հրէայ է, և նորով չփայլէր, վրէժ և սատակումն չլիւնէր, ոչ թէ հրէայները ազատելու վրայ կը խօսէ, այլ զաշխարհ փրկելու: Իւր թողութիւնը ինչ ներդրութեան և խաղաղութեան թաղապետութիւնն է: Չէ եկած նա երկաթով տրեւելու, կոյծակով զարնելու, այլ խօսքով ամբողջ և սիրով քաղաքակրթելու:

Այսպէս Յիսուսի Քրիստոսի կը պարտի մարդկային սեռն իւր միութեան զգացումն:

Որչափ ճշմարտութիւններ յայտնում միայն ստոր մէջ կ'աղբէին, և կրնային շիջանել և մեռնիլ ընդ նախ: Եղբւր վայրկեան մը տը երկրագնդին բովանդակ ապագայն միայն մէկ հոգեւոյ մէջ ամփոփեալ կը գտնուէր:

Մարդկային սեռն կը նուազանար, կը խնարհէր կույտ առջ, և նա միայն կը քարոզէ արարիչ Աստուծոյ, անծանօթ Աստուծոյ, Աստուծոյ մը:

Բոլոր ժողովուրդը համահաճ էին դերութիւնը վաւերացնելու: և նա միայն քառ ժողովուրդից, բոլոր մարդիկ ազատ են, որովհետեւ բոլոր մարդիկ եղբայր են:

Իմաստունք իրենց վերապահած էին բոլոր բարոյական ճշմարտութիւններն: Նորա մարդոց գործերն միայն քաղաքական օրէնքներով կը կանոնաւորէին: Հռոմի և Սպարտայի առաքելութիւններն իրենց սահմանադրութեան մէջ գրուած են, և ոչ իւրեանց կրօնից մէջ:

Յիսուս միայն երկրի վրայ կ'առնուի միտ թէ օրէնսդիրն այս գործը անկատար է, թէ մեր հոգին կը պնդէ իր ստանձուկ սահմաններու մէջ և կը խորտակէ նորա առաքելութեան թրուիչը: Նա՛ միայն գիտէ որ մարդն միայն հայով չ'ապրիր, այլ և ճշմարտութեամբ: Այս ճշմարտութիւններն մինչև ցինքն անծանօթ կը ներկայացնէ նա բոլորովին ժողովուրդական ուսուցման մը դիւրին և շնորհալի ձևին տակ: Փիլիսոփայից վերացեալ իմաստութեան տեղ կը դնէ պարզ, որոշ, վե՛հ, մարդուն համար եղած իմաստութիւն մը, որովհետեւ ականջին հետ նաև նորա սիրտը կերթայ, առանց ճգան, առանց աշխատութեան, իրրու կրկնութիւն մի այնպիսի զգացման մը որ կը հանգչէր արգէն նորա հոգեւոյն մէջ, և զոր իւր հետ յերկինս պիտի տանի:

Բարձրագոյն առաքելութիւնն մինչև ցին, կը կայանայր երկրին այն փոքրիկ անկեան համար մեռնելուն մէջ, ուր մարդ ընդունած էր կեանքը: Բռնադաւաճ ին սահմանները նաև մարդասիրութեան սահմանքը կ'որոշէին: Հիմայ, փրկիչն կուգայ մեղ ատել, մեր հայրենիքն՝ երկրագնդուն է ողջոյն, մեր ընտանիքը՝ մարդկային սեռն է, մեր հայրն՝ Աստուծոյ է: Չափեցէ՛ք այս խօսքերուն մեծութիւնը, և տեսէ՛ք ինչ սկիզբն մեղ կուտան, ինչ բարոյականութիւն կը տարածեն, և ինչ ճակատագիր մեղ կը խոստանան: Նախ՝ նիք կ'ըսէին, «պէտք է սիրել զընտանիս առաւել քան զանձն», և զհայրենիս առաւել քան զընտանիս»: Եւ աստի յառաջ կուգայր, քաղաքակրթութիւն մասնական, պատերազմ յաւիտենական:

Յիսուս Քրիստոս կը յարէ, «և մարդկային սեռն առաւել քան զհայրենիս», աստի կը ծնի տիեզերական քաղաքակրթութիւն, բարոյական անյաղթելի, խաղաղութիւն ընդ հանուր: Սէր որդիական առ Աստուծոյ, սէր եղբայրական առ մարդիկ, օրէնք երկնային և երկրային, բարձրագոյն կէտ կատարելութեան՝ ուր հոգին կարէ հասնիլ: Լուս դիտեցէ՛ք որ բնութեան օրէնքն մը կը հանէ Յիսուս Քրիստոս իւր կրօնը, և մարդկային սրտին մէջէն կ'առնուի իւր պատուէրներն: Յառաջ քան զնա, և դիմադրող կը պնդէ իւր այս գաղափարին վրայ, քաղաքական օրէնսդրութիւնը միայն կը զօժէին քաղաքացւոյն պարտաւորութիւններն: մարդկային բարոյականը նիւթական շահերով միայն կապ ունէր կրօնին հետ: Բնաւ բան մը զմարդ Աստուծոյ չէր միտցնէր: Առաքելի էին հայրենեաց համար: Աւետարանը առաքելի ըրաւ զմեզ մարդկութեան և երկրին համար: Այս կերպով բարոյականը և կրօնքն, Աստուծոյ և մարդկան սէրը, յիշեալ կցորդելով, Յիսուս գարման բերաւ միանգամայն փիլիսոփայից անկրօն բարոյականին և դիցապաշտ ազգաց անբարոյական կրօնքին: Այսպէս զատապարտեցան առ յաւէտ բոլոր կրօնական բռնութիւններն: սիրել զԱստուծոյ և զմարդիկ, ըսել չէ թէ Աստուծոյ հաճոյ լինելու համար պէտք է զմարդիկ խողտել, հայրն չպիտի ինչդէ իւր զաւակայ արեւը և որդիք չպիտի հեղուն իրենանց եղբայր պիւնը: Սէրը սիրեցեալ առ արկային երջանկութիւնը կ'ուզէ, և ոչ սէր անոր կը վերադրէ բարկութեան և ատելութեան սճերքն, կը խորտակէ բնութեան օ-

րէնքը, մարդու մը խորհուրդը կը գընէ Աստուծոյ խորհրդոյն տեղը:

Այժմ՝ կշռենք վարդապետութիւններն, համառօտենք սկզբունքներն ըսինք,

կրօնքն այն է ժողովուրդեան ինչ որ է հոգին մարմնոյն:

Արդ, նախնեաց կրօնքը, այնքան բանաստեղծական իւր ձևերուն մէջ, այնքան մարդկայի՛ իւր էութեան մէջ, չպարունակելով բնաւ տարր մը յառաջգիւղական, և անշարժ կրօնք մը չկրնայով հաստատուն մնալ յառաջ ներկայից ժողովուրդեան մը մէջ, հետևյալցինք անտի գիւմը զարգացումն արդիւրեւ էր նախնի ընկերութեանց, եթէ ոչ հարկ էր մեռնիլ իրենց:

Ան կրնայ լոյս մը սփռել Հասարակութեան (1) մէկ հաստատութիւն վրայ, ուր Պրատոն սկզբունք կը դնէ թէ վստահաւոր է ճշմարտութիւնն ըսել ժողովուրդեան, թէ պէտք չէ խախտ հարաւածել անոր կրօնական կարծիքներն, և թէ նոյն իսկ ինչ ինչ պարագայից մէջ պարտք մ'է ուսման նախապաշարմունքներն պահել: Այսպէս հնոց մէջ բարձրագոյն փիլիսոփայութիւնն իսկ մոլորութեանց թողաւ կը հանդիսանայր ևս առաւել կը սովորեցնէր զանոնք:

Հասարակութեան մէջ յայտնուած այս գաղափարը մահուան վճիռն էր հնութեան բոլոր ժողովուրդոց: Պրատոն հասկացած էր որ, Յունաստանի կրօնքն և օրէնսդրութիւնքն մոլորութեան վրայ հիմնուած ըլլալով, ամեն ինչ պարտ էր կործանել յառաջին յայտնութիւն ճշմարտութեան:

Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը, ընդհանրապէս, աշխարհի կատարեալ իւր էութեան մէջ, որ բառնալ այն մոլորութեանց քոզը, բուժել այն նախադաշտութիւններն և կործանել այն սնապաշտութիւնքն՝ որովք մեր կուրու ինքներն զայն կը պատեն, կը նշանակէ դառնալ իւր նախնական պարզութեան, մերկայնել զայն իւր երկրային հանդերձներէն: կրնանակէ կեանքը և ազատութիւնը սիրել ժողովուրդոց վերայ ըստ աստուածեղէն բանիցն Յիսուսի Քրիստոսի թէ «ճշմարտութեան յեղաշրջանը»:

ԷՄԼ-ՄԱՐԹԷՆ

Թագաւոր
Իսկուհի Յակոբեան
Աշակերտութիւն
Ազգական վարժարանի

ԻԼՄՆ

1871 սէնէսի աշակերտական ընտնուին էլ վիլի իսթ խառնուա եանի Բուսի թշրինի սանի 19ընծը կիւնիւ Զարբխանէի ամբիւէտ քուրբարը քէշիտէ օրու նաճագ Բուսիլի աշմիր Եօլու հիւսէլիլի նին իրարմիէ (բրոմէս) պիլէթլէրին թէքմիլի 10 մէ բուպու 3 զրուշա սով ըլլըր մէճիտիէ 20 զշ հիւսպը իլէ Ստամբուլ Էմթա կէօմրիկիւն սրբաւնետա նիւմբո 75 մաղաղատա:

Չիւսաւէճէ ալընաղըր հայտէ ֆիլիսթիա պիլաղ տահա իրարմ օրուաճաղը վատ օրուաւոր:

Դուկաւ Երկանեան

(1) Գործողութիւն:

ՍՄՀԻՊ ՊԱՋԷՐԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ
Գալաթիոս Բէնճի մարտի քաղաքընտա
Նումբո 41 Իսթի խանընտա